Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության համալսարանի
Ռեկտոր,
____________ Ն.Խ. Սարիբեկյան
«____» _____________ 20__ թ

# ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
# 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
# ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

# ՆԱԽԱԲԱՆ

Տվյալ հաշվետվությունը ներառում է Ավանդական բժշկության համալսարանի գործունեության բոլոր արդյունքները 2017- 2018ուսումնական տարվա ժամանակահատվածում:

Ստորաբաժանումները իենց գործունեության ընթացքում ղեկավարվել են ՀՀ կրթության և գիտության նախարարության, Համալսարանի կառավարման, գիտական խորհրդի, ռեկտորատի որոշումներով, հրամաններով:

Դասավանդվող առարկաների որակի բարձրացման, ուսանողության հաճախումների և գիտելիքների հաղորդման, դասախոսներին աշխատանքների մեջ ընդգրկելու ուղղությամբ կատարվել են մեծածավալ աշխատանքներ:

Այդ ամենը նպաստեց, որպեսզի Բոլոնյան հռչակագրի և կրեդիտային վարկանիշային համակարգի ներդրման ճանապարհին ընթանա սահուն: Օգտագործվել ու կիրառվել են մանկավարժական ու գիտահետազոտական ժամանակակից մեթոդներ, ուղղություններ, մոտեցումներ բարձրորակ բժիշկ մասնագետներ պատրաստելու համար:

Հաշվետվության մեջ բերված են ամփոփիչ տվյալներ համալսարանի ստորաբաժանումների գործունեության վերաբերյալ:

## 1.ԱԲՀ ԿԱԴՐԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԸ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

**2017-2018 ուսումնական տարում աշխատողների միջին թիվը կազմել է 100 մարդ:**

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի թիվը՝ 67 մարդ /որից 48-ը կին/,

Պրոֆեսոր - 2, որից 1-ը կին:

Գիտությունների դոկտոր - 4, որից 2-ը կին:

Դոցենտ -11, որից 7-ը կին:

Գիտությունների թեկնածու- 17, որից 10-ը կին:

5 դասախոս համատեղության կարգով զբաղեցնում են վարչական պաշտոններ:

Վարչական անձնակազմը - 17, որից 15-ը կին:

Ուսումնաօժանդակ կազմը - 8, որից 4-ը կին:

Գիտա-բժշկական ուսումնական կենտրոն-11, որից 8-ը կին:

Տնտեսական մասը-7, որից 4-ը կին:

2017-2018 ուստարվա ընթացքում կնքվել է 80 աշխատանքային պայմանագիր: Հիմք ընդունելով ռեկտորի 30.12.2016թ-ի թիվ 368 հրամանը /աշխատանքային պայմանագրերի ձևերը փոխելու մասին/, հիմնական աշխատակիցների աշխատանքային պայմանագրերից փոփոխվել է 7-ը:

- Բոլոր աշխատողները աշխատանքի ընդունվել են պայմանագրային կարգով՝ որոշակի ժամկետով:

  Անձնական դիմումի համաձայն ազատվել են 3-ը /պայմանագրի լուծարմամբ/, իսկ աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալու կապակցությամբ՝ 71, որից 1-ը հիմնական աշխատող:
- Արձակուրդների տևողությունը հաշվարկվել է համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի և ՀՀ կառավարության 16 նոյեմբերի 2017 թվականի N1450-Ն որոշման:

  Պրոֆեսորադասախոսական կազմ՝ 42 աշխատանքային օր:

  Ռեկտոր, դեկան, վարչական ստորաբաժանումների ղեկավարներ՝ 30 աշխատանքային օր:
- 2017-2018 ուստարվա հերթական արձակուրդները տրամադրելու համար տրվել է ռեկտորի հրաման:

- Հաստիքացուցակը կազմվել է 01.09.2017թ-ին, կատարվել է փոփոխություն և հաստատվել ռեկտորատի նիստում:
- Համալսարանում աշխատում են տարիքային 18 թոշակառուներ:
  Թոշակները ձևակերպելու և վերահաշվարկի համար աշխատանքային ստաժի մասին տրվել են համապատասխան տեղեկանքներ:
- Բաժնում աշխատանքի ընդունման, ազատման, պաշտոնի փոփոխության և բոլոր այլ հրամանները գրանցվում են հրամանագրքում:
  Բոլոր աշխատողների, ներառյալ ժամավճարային աշխատողների, անձնական գործերում առկա են հրամանները և իրավական այլ փաստաթղթերի փոփոխությունները:
  2017թ-ի հրամանների թիվը կազմել է 1-ից մինչև 362-ը:
- Կատարվել է հրամանների կրկնօրինակների կամ քաղվածքների տրամադրում հասցեատերերին, որը հաշվառվել է գրանցամատյանում:
  Տարվա ընթացքում իրականացվել է մուտքի և ելքի փաստաթղթերի հաշվառում՝ համապատասխան գրանցամատյաններում:
  Կատարվել է դիմումների և զեկուցագրերի հաշվառում:
- Նոր ուսումնական տարվա սկզբին, ուսումնական մասի հետ տրվել է վիճակագրական հաշվետվություն, հիմնականում պրոֆեսորադասախոսական կազմի, նրանց զբաղեցրած պաշտոնների, դրույքաչափերի մասին: Բոլոր տվյալներում առանձնացված է կանանց թիվը:
- Հաշվետու ժամանակահատվածում աշխատողներին տրվել է 172 տեղեկանք /բանկ, դեսպանատներ, դպրոցներ, սոց. ծառայությունների տարածքային բաժիններ/ ներկայացնելու համար:

## 2. ՈւՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2017-2018 ուսումնական տարում համալսարանի ուսումնական մասն իրականացրել է ուսումնակրթական գործընթացներ՝ համալսարանում գործող կրթական ծրագրերին ու պլաններին, պետական չափորոշիչներին համապատասխան:

- 2017-20118 ուսումնական տարում իրականացվել է համալսարանի «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտությունների անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերի ուսումնական պլանների, մասնագրերի վերանայման աշխատանքներ: Հանդիպումների, քննարկումների արդյունքում ամբիոններում փոփոխություններին համապատասխան վերանայման աշխատանքներ են կատարվել առարկայական ծրագրերի, առարկայական նկարագրերի ուղղությամբ:
- Ուսումնական տարվա ընթացքում բուհի հավատարմագրման գործընթացի հետ կապված իրականացվել են համալսարանում գործող կանոնակարգերի, կարգերի, հարցաթերթիկների և այլ ձևաթղթերի վերանայման, մշակման աշխատանքներ, պատրաստվել են ուսումնական նյութեր և տրամադրվել համապատասխան ստորաբաժանումներին:
- Տարեսկզբին ժամանակին պատրաստվել և հաստատվել են ուսումնական գործընթացը պատշաճ իրականացնելու հետ կապված ուսումնական գործընթացին առնչվող բոլոր փաստաթղթերը /մատյաններ, դասաբաշխման, ամբիոնի ուսումնական աշխատանքների ծավալի, օրացուցային-թեմատիկ պլանների, խորհրդատվությունների մատյանի և այլ ձևաթղթեր/, ուսանողների ցուցակները: Ամբիոններն ապահովվել են ուսումնական անհրաժեշտ փաստաթղթերով:
- 2017-2018 ուսումնական տարում կազմվել և ժամանակին պատրաստ են եղել երկու ֆակուլտետների ու նախապատրաստական կուրսի ուսումնական տարվա ուսումնական օրացույցները, միջանկյալ ստուգարքների, քննությունների, լուծարքների և պրակտիկաների ժամանակացույցները: Ուսումնական մասի կողմից կազմակերպվել են և վերահսկվել դրանց անցկացումը: Ժամանակին պատրաստ են եղել ստուգարքային և քննական տեղեկագրերը:
- 2017-2018 ուսումնական տարվա աշնանային և գարնանային կիսամյակների համար կազմվել են բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետների դասացուցակները: Հաշվետու ժամանակահատվածում անընդհատ վերահսկվել է դասընթացների իրականացումն ըստ դասացուցակի:

- Բաշխվել է մասնաշենքի լսարանային ֆոնդը, կլինիկաներում ճշտվել է ուսանողներին հատկացված ուսումնական սենյակների հարցը: Ե'վ համալսարանը, և' կլինիկական բազաներն ապահոված են եղել լսարանային և կլինիկական գործնական պարապմունքները լիարժեք իրականացնելու համար անհրաժեշտ պայմաններով: Բոլոր ամբիոնները, բազաների ուսումնական սենյակները համալրված են նաև համակարգիչներով և միացված են համացանցին:
- Կազմակերպվել են ուսանողական տոմսերի, ստուգարքային գրքույկների, ոսումնական տարվա համար մատյանների, դիպլոմների հավելվածների և այլ նյութերի տպագրումը, 1-ին կուրսեցիներին և այլ կուրսեր ընդունվածներին ստուգման գրքույկների և ուսանողական տոմսերի լրացումն ու հանձնումը:
- Դեկանի, ուսումնական մասի վարիչի, կուրսղեկների կողմից, ուսանողական խորհրդի հետ համատեղ կազմակերպվել և անցկացվել է խորհրդակցություններ բոլոր կուրսերում՝ կապված ուսումնական գործընթացների հետ: Կազմակերպվել են նաև խորհրդակցություններ բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետների ավարտական կուրսերի ուսանողների հետ:
- Հաշվետու տարվա աշնանային և գարնանային կիսամյակներում համալսարանում ուսումը շարունակելու նպատակով վերականգնվող /3/, այլ բուհերից տեղափոխված /12/, հեռացված /12/ուսանողների համար կազմակերպվել են փաստաթղթերի ձևակերպում, պայմանագրերի կազմում, առարկայական տարբերությունների հանձնման ժամանակացույցի կազմում, ստուգման գրքույկների և ուսանողական տոմսերի հանձնում: Առարկայական տարբերությունների, դրանց ժամանակացույցի մասին ժամանակին տեղեկացվել են համապատասխան ամբիոններն ու դասախոսները:
- Հաշվետու տարում կազմակերպչական բարձր մակարդակով են իրականացվել ամփոփիչ ավարտական ատեստավորումները: Կազմակերպվել են ամփոփիչ ատեստավորումների նախապատրաստումը, պլանավորումն ու անցկացումը: Ամփոփիչ ատեստավորումներն ապահովվել են անհրաժեշտ փաստաթղթերով: Կազմակերպվել են շրջանավարտների դիպլոմների և նրանց հավելվածների լրացման աշխատանքները և կատարվել է շրջանավարտների դիպլոմների բաշխման մատյանի վարումը:

- Աշնանային և գարնանային  կիսամյակների ընթացքում հաճախակի կատարվել է ամբիոնների նիստերի մասնակցություն, որտեղ քննարկվել և վերլուծվել են ուսումնադաստիարակչական աշխատանքների դրվածքը տվյալ ամբիոնում, ուսանողների առաջադիմության արդյունքները, լուծարքների, պրակտիկաների արդյունքները:

  Դասերից բացակայող, ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների նկատմամբ ձեռնարկվել են միջոցներ՝ անհատական զրույցների, բացատրությունների, խորհրդատվությունների ձևով, տարվել համապատասխան աշխատանքներ:
- Կիսամյակների ընթացքում  բոլոր կուրսերում, համապատասխան կուրսի կուրսղեկի, ուսումնական մասի վարիչի, ուսանողական խորհրդի նախագահի  հետ  միասին անցկացվել են խորհրդակցություններ, որտեղ քննարկվել են առաջադիմությունը, հաճախումների վիճակը, ինչպես նաև կազմակերպչական հարցեր:
- Կազմակերպվել են  ձմեռային և ամառային քննաշրջանները, լուծարքները և վերահսկվել են  դրանց  ողջ ընթացքը:
  - Բոլոր կուրսերում քննաշրջանի հետ կապված կազմակերպվել են խորհրդակցություններ, որոնցում  պարզաբանումներ են տրվել քննաշրջանի հետ կապված ամենատարբեր  հարցերի վերաբերյալ:
  - Կազմվել են քննաշրջանի ժամանակացույցները՝ դրանք նախապես համաձայնեցնելով ուսանողների հետ:
  - Հիշեցման կարգով կրկին ներկայացվել են և մանրամասն բացատրվել կրեդիտային համակարգի, ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման, ուսանողների հեռացման, վերականգնման, լուծարքների  այլ կարգերը:
  - Դասախոսները, զեկուցագրերի ձևով, քննաշրջաններից առաջ դեկանատ են ներկայացրել և տեղեկացրել այն ուսանողների մասին, որոնք բացակայությունների, ցածր առաջադիմության համար չեն թույլատրվել մասնակցելու այս կամ այն ստուգարքին կամ քննությանը:
  - Քննություններից առաջ բոլոր քննական առարկաներից  անցկացվել են խորհրդատվություններ:

- Քննաշրջանից անմիջապես հետո բոլոր կուրսերում անցկացվել են խորհրդակցություններ, որոնցում վերլուծվել են քննաշրջանի արդյունքները, հատկապես բարձրացվել է ակադեմիական պարտքեր ունեցողների հարցը և նրանց տեղեկացվել լուծարքների անցկացման ժամանակացույցը:
- 12-ից ավելի կրեդիտ կազմող ակադեմիական պարտքեր ունեցող ուսանողներին տեղեկացվել է համալսարանից նրանց հեռացման մասին:

➢ Կարգավորվել և վերահսկվել են համալսարանի ամբիոնների ուսումնական պարապմունքներն ու գործունեությունը:

➢ Յուրաքանչյուր ամիս ուսումնական մասի կողմից իրականացվել է հաշվառում ամբիոններում դասախոսների կողմից կատարված բեռնվածության ուղղությամբ: Ստացված տվյալները ամփոփվում են ամբիոնների տարեկան հաշվետվություններում: 2017-2018 ուսումնական տարում բոլոր 8 ամբիոնների ուսումնական աշխատանքների ծավալը կազմել է 22 806 ժամ:

Կազմակերպվել և ստուգվել են 2017-2018 ուստարվա համալսարանի 8 ամբիոնների տարեկան դասախոսական անձնակազմի ուսումնական ծանրաբեռնվածությունների հաշվարկները /աղյուսակ 1/:

Աղյուսակ 1

**Ուսումնական ծանրաբեռնվածությունների կատարողականի ցուցանիշները**

| Հ/հ | Ամբիոններ | Պլան /ժամ/ | Կատարո-ղական/ժամ/ | Շեղում /ժամ/ |
|---|---|---|---|---|
| 1. | Հումանիտար առարկաների | 1852 | 1728 | -124 |
| 2. | Բնագիտական առարկաների | 2098 | 1972 | -126 |
| 3. | Բժշկակենսաբանական առարկաների | 3661 | 3330 | -331 |
| 4. | Թերապևտիկ առարկաների | 1776 | 1563 | -213 |
| 5. | Վիրաբուժական առարկաների | 1324 | 1242 | -82 |
| 6. | Կլինիկական առարկաների | 1862 | 1718 | -144 |
| 7. | Ստոմատոլոգիայի | 4036 | 3771 | -265 |
| 8. | Է.Մինասյանի անվան ավանդական բժշկության | 943 | 941 | -2 |
| **Ընդամենը** | | **17 552** | **16 265** | **1287** |

2017-2018 ուսումնական տարում 8 ամբիոնների ուսումնական ծանրաբեռնվածությունն ըստ պլանի կազմել է **17 552 ժամ**, սակայն կատարվել է **16 265 ժամ**: Ընդհանուր առմամբ տարվա ընթացքում չի կատարվել **1 287 ժամ** բեռնվածություն:

Աղյուսակ 2-ից պարզ երևում է, որ առավել մեծ է եղել ուսումնական ծանրաբեռնվածությունը «Ստոմատոլոգիայի» (4036 ժամ) և «Բժշկակենսաբանական առարկաների» (3661 ժամ) ամբիոններում, իսկ համեմատաբար պակաս է եղել՝ «Է. Մինասյանի անվան ավանդական բժշկության» ամբիոնում (943ժամ)՝ կապված բարձր կուրսերում ուսումնական խմբերի պակասի հետ:

Ծանրաբեռնվածության ժամաքանակի շեղումը բացատրվում է տոնական և ոչ աշխատանքային օրերի հետ կապված և խորհրդատվություններին հատկացված ժամերի թերակատարմամբ:

Համալսարանի ամբիոնների ընդհանուր ուսումնական բեռնվածությունը մեծացել է ուսանողների քանակի ավելացման շնորհիվ:

- Ըստ ամբիոնների կատարվել է պրոֆեսորադասախոսական անձնակազմի բեռնվածության պլանավորում, հաշվառում:
- Հաշվետու տարում վերահսկվել է համալսարանական ամբիոնների դասախոսների կողմից ուսումնական պլանների ու առարկայական ծրագրերի կատարման ընթացքը:
- Վերահսկվել է դասախոսների աշխատանքային կարգապահությունը, որոշ դասախոսների կողմից արձանագրվել են բացակայության, դասերից ուշացումների դեպքեր /Մ. Սաքանյան, Լ. Սուքիասյան/, որոնց արվել են բանավոր զգուշացումներ:
- Ուսումնական գործընթացի ժամանակացույցին համապատասխան միջանկյալ ստուգումների, ստուգարքների և քննությունների անցկացման ընթացքն ամբողջովին կազմակերպվել է ժամանակին և առանց թերացումների, քանի որ ապահովված են եղել անհրաժեշտ բոլոր պայմաններով:

➢ Հաշվետու տարում մասնակցություն է ցուցաբերվել համալսարանի ինքնավերլուծություն իրականացնող աշխատանքային խմբի աշխատանքներին, ռեկտորատի, գիտ. խորհրդի նիստերին:

- Կազմվել են 2017-2018 ուսումնական տարվա համալսարանի տարեկան վիճակագրական 3-ԳՄ-1,1-ԳՄ հաշվետվությունները, հանձնվել ռեկտորին՝ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրության ծառայություն և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ներկայացնելու համար:
- 2017-2018 ուսումնական տարում տրվել են շուրջ 49 ակադեմիական տեղեկանքներ ուսանողական իրավունքներից ազատված, հեռացված, ինչպես նաև առկա սովորող ուսանողներին՝ համապատասխան երկրի կրթության նախարարություն ներկայացնելու նպատակով:

## 2.1. Ուսումնամեթոդական աշխատանքներ

Հաշվետու տարում մեթոդական աշխատանքներն ուղղված են եղել ամբիոնների ուսումնամեթոդական աշխատանքների մատենավարությանը և փաստաթղթերի վարմանը: Մեթոդական աշխատանքներն ուղղված են եղել իրագործելու Բոլոնյան հռչակագրի պահանջները և բնականաբար, կրթության որակի բարձրացմանը: Անցկացվել են բազմաբնույթ ու բազմածավալ մեթոդական աշխատանքներ, այդ թվում՝ մեթոդական սեմինարներ, կոնֆերանսներ, քննարկումներ, խորհրդակցություններ:

Ուսումնական մասը դեկանի հետ պարբերաբար մասնակցել է ամբիոնների նիստերին, ինչպես նաև դասալսումների՝ «Բժշկակենսաբանական առարկաների», «Թերապևտիկ առարկաների», «Վիրաբուժական առարկաների», «Կլինիկական առարկաների» ամբիոններում:

Հաշվետու տարում ամբիոններում քննարկվել են բազմաթիվ մեթոդական հարցեր՝ կապված ուսումնական գործընթացի բարելավման հետ: Կարևորվում է նաև այն փաստը, որ տարեցտարի ամբիոններում ընդլայնվում է համակարգչային տեխնիկայի ներդրումն ու կիրառումը ուսումնական գործընթացում:

Ամբիոններում հաշվետու տարում ակտիվորեն շարունակվել են ուսումնամեթոդական նյութերը օտար լեզվով պատրաստելու աշխատանքները:

## 2.2. Ուսումնաարտադրական պրակտիկա

Դեկանի և ուսումնական մասի վարիչի կողմից խորհրդակցություններ են անցկացվել ամառային ուսումնաարտադրական պրակտիկա ունեցող կուրսերում՝ դրանց կազմակերպման, անցկացման հետ կապված:

2017-2018 ուսումնական տարվա սեպտեմբերին ամբիոններում ամփոփվել են 2016-2017 ուսումնական տարվա ամառային պրակտիկաների արդյունքները:

16.06-18.07.2017թ. ԳԲՈՒԿ-ում և ձեռքի հմտությունների մասնագիտացված կաբինետներում անցկացվել են «Վիրաբուժական ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա», «Օրթոպեդիկ ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա», «Թերապևտիկ ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա», «Բուժքույրություն» ամառային պրակտիկաները ստոմատոլոգիական ֆակուլտետի 2 և 3-րդ կուրսերում:

Բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետների օտարազգի ուսանողները, համաձայն ԱԲՀ-ի «Ուսանողների պրակտիկաների կազմակերպման և անցկացման» կանոնակարգի 2.5 կետի, պրակտիկան անցկացրել են Իրաքի կլինիկաներում /Նուրջան ԲԿ, Հիուա հիվանդանոց, Ռոժ Հալաթ շտապօգնություն, Ռզգարի հիվանդանոց/ և ներկայացրել են համապատասխան փաստաթղթերը:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- Համալսարանի ուսումնական մասը 2017-2018 ուսումնական տարում իրականացրել է բարձրագույն մասնագիտական կրթության ուսումնակրթական գործընթացներ՝ համալսարանում գործող կրթական ծրագրերին ու պլաններին, պետական չափորոշիչներին համապատասխան, ինչպես նաև ապահովել է դասընթացների անխափան կազմակերպումը, համալսարանական ամբիոնների բնականոն գործունեությունը:
- Ուսումնական մասում գործող որոշ ձևաթղթեր վերանայման կարիք ունեն, քանի որ ավելորդ աշխատատարություն են պահանջում:

  Անհրաժեշտություն կա մշակելու ստուգարքային, քննական նոր ձևաթղթեր՝ նոր գնահատման համակարգի բաղադրիչներին համապատասխան:

- Մտահոգիչ է, որ կան դասախոսներ, որոնք զգուշացումներից հետո էլ շարունակել են ուշանալ դասերից /Սուքիասյան Լ., Սաքանյամ Մ./:
- Համալսարանում գնալով բարելավվել է դասավանդման որակը, սակայն բարձրագույն կրթության ժամանակակից խնդիրների և որակի ապահովման նպատակով առաջարկվում է ուսուցման ժամանակակից մեթոդների, ուսուցման ինտերակտիվ մեթոդի, դասախոսի դերի, դասընթացի նյութերի պատրաստման և այլ թեմաներով կազմակերպել դասախոսություններ, հատկապես երիտասարդ դասախոսների համար:

## 3. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԿԱԶՄ, ՇԱՐԺԸ ԵՎ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ

Ավանդական բժշկության համալսարանը 2017-2018 ուսումնական տարում «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտությունների գծով շարունակել է պատրաստել բժշկական կադրեր՝ անընդհատ և ինտեգրացված, բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով:
Համալսարանում սովորում են հայազգի և օտարազգի ուսանողներ, դասավանդումն իրականացվում է հայերենով և անգլերենով:

- 2017-2018 ուսումնական տարում կազմակերպվել է բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետների անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով և մագիստրատուրայի դիմորդների ընդունելության գործընթացի հետ կապված նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքներ:

  Ընդունելության վերջին երեք տարվա վերլուծությունը ցույց է տալիս, որ ԱԲՀ-ում շարունակվում է դիմորդների հոսքի ավելացման միտումը՝ շնորհիվ օտարերկրացի դիմորդների: 2016-2017 ուսումնական տարվա համեմատությամբ /28 ուսանող/ այս տարի ընդունելությունն աճել է 2,6 անգամ:

  «Քիմիա», «Կենսաբանություն» և «Անգլերեն» առարկաներից կազմակերպվել և անցկացվել է դիմորդների գիտելիքների ստուգում: Արդյունքները գոհացուցիչ էին, որոնց հիման վրա թվով 71 օտարերկրացի ուսանողներ ընդունվել են համալսարանի անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետների առաջին կուրս:

- Կիսամյակների սկզբում ճշտվել են բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետների բոլոր կուրսերի ուսանողների ցուցակները, կազմվել են ուսումնական խմբերը, ըստ որի ձևավորվել է ուսումնական 13 խումբ՝

**Բուժական ֆակուլտետ՝ 6 խումբ**

***Անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով՝***

- I կուրս՝ 2 խումբ /օտարազգի/
- II կուրս՝ 1 խումբ /օտարազգի/
- III կուրս՝ 1 խումբ /օտարազգի/

***Մագիստրատուրայի կրթական ծրագրով՝***

- I կուրս՝ 1 խումբ /հայազգի/
- II կուրս՝ 1 խումբ /հայազգի/

**Ստոմատոլոգիական ֆակուլտետ՝ 7 խումբ**

***Անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով՝***

- I կուրս՝ 1 խումբ /օտարազգի/
- II կուրս՝ 1 խումբ /օտարազգի/
- III կուրս՝ 2 խումբ /1 խումբ հայազգի և 1 խումբ օտարազգի/
- IVկուրս՝ 1 խումբ /հայազգի/

***Մագիստրատուրայի կրթական ծրագրով՝***

- I կուրս՝ 1 խումբ /հայազգի/
- II կուրս՝ 1 խումբ /հայազգի/

- Համալսարանի ուսումնական մասը դեկանի, բոլոր ամբիոնների հետ ուսումնական տարվա ընթացքում նպաստավոր աշխատանքներ է ծավալել հաճախումների և առաջադիմության հարցերը բավարար հիմքերի վրա դնելու գործում: Այդ առումով անցկացվել են արտադրական խորհրդակցություններ, կոնսուլտացիաներ, հանդիպումներ, անհատական բացատրական աշխատանքներ: Համալսարանի գիտելիքների գնահատման կարգում /որպես գնահատման բաղադրիչ/ հաճախումներին հատկացված է 20 միավոր, որն իր դրական ազդեցությունն է թողնում հաճախումների

ցուցանիշների վրա: Ուսումնական մասը, ամբիոնները և դեկանատը ուշադրության կենտրոնում են պահում այդ հարցը, խիստ հետևողականության արդյունքում բացակայողների թիվը հասել է նվազագույնի:

- Երկու կիսամյակների ընթացքում ուսանողները հանձնել են 110 ստուգարք և 138 քննություն:
- Տարվա կտրվածքով սովորողների ընդհանուր առաջադիմությունը կազմել է 66 տոկոս, իսկ որակականը՝ 56, 2 տոկոս:
- Վերլուծվել են բոլոր ամբիոնների տարեկան հաշվետվությունները: Ըստ ամբիոնների առաջադիմության արդյունքները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

| N | Ամբիոն | Աշնանային կիսամյակ | | Գարնանային կիսամյակ | | Տարեկան առաջ. | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ընդհ. առաջ.% | Որակ. առաջ. % | Ընդհ. առաջ. % | Որակ. առաջ. % | Ընդհ. առաջ. % | Որակ. առաջ. % |
| **Հումանիտար առարկաների** | | | | | | | |
| 1 | Բուժական ֆակուլտետ | 66.4 | 51.7 | 66.9 | 58.8 | 57.1 | 47.6 |
| 2 | Ստոմատոլոգիական ֆակուլտետ | 62 | 54.2 | 59.2 | 40.3 | 45.4 | 35.4 |
| ***Ընդամենը*** | | ***64.2*** | ***5753*** | ***63*** | ***49.6*** | ***51.3*** | ***65.3*** |
| **Բնագիտական առարկաների** | | | | | | | |
| 1 | Բուժական ֆակուլտետ | 64,6 | 50,5 | 63 | 49,5 | 65 | 52 |
| 2 | Ստոմատոլոգիական ֆակուլտետ | 60 | 38 | 55 | 28 | 59 | 34,5 |
| ***Ընդամենը*** | | ***62,3*** | ***44,3*** | ***59*** | ***38,7*** | ***62*** | ***43,2*** |
| **Բժշկակենսաբանական առարկաների** | | | | | | | |
| 1 | Բուժական ֆակուլտետ | 63,2 | 52,2 | 66,6 | 55 | 64,8 | 53,7 |
| 2 | Ստոմատոլոգիական ֆակուլտետ | 56,6 | 28,4 | 58,2 | 31,6 | 59,4 | 33 |
| ***Ընդամենը*** | | ***60*** | ***40,2*** | ***62,4*** | ***43,3*** | ***62,1*** | ***43,4*** |
| **Կլինիկական առարկաների** | | | | | | | |
| 1 | Բուժական ֆակուլտետ | 73.9 | 68.5 | 73.8 | 68.65 | 73.8 | 68.6 |
| 2 | Ստոմատոլոգիական ֆակուլտետ | 71.5 | 61.8 | 68.8 | 68.8 | 70.6 | 64.2 |
| ***Ընդամենը*** | | ***72.7*** | ***65.1*** | ***71.3*** | ***68.7*** | ***72.2*** | ***66.4*** |
| **Թերապևտիկ առարկաների** | | | | | | | |
| 1 | Բուժական ֆակուլտետ | 75,4 | 75,7 | 70,9 | 65,9 | 72,8 | 69,5 |
| 2 | Ստոմատոլոգիական ֆակուլտետ | 69,8 | 74,2 | 60,6 | 35 | 73,6 | 58,8 |
| ***Ընդամենը*** | | ***72,6*** | ***74,9*** | ***65,8*** | ***50,5*** | ***73,2*** | ***64,2*** |
| **Վիրաբուժական առարկաների** | | | | | | | |
| 1 | Բուժական ֆակուլտետ | 70,4 | 65,4 | 87 | 68,2 | 75,4 | 72,9 |
| 2 | Ստոմատոլոգիական ֆակուլտետ | 64,8 | 58,3 | 64 | 49 | 64,3 | 52 |
| ***Ընդամենը*** | | ***67,6*** | ***62*** | ***75,5*** | ***58,6*** | ***69,8*** | ***62,4*** |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Ավանդական բժշկության** | | | | | | | |
| 1 | Բուժական ֆակուլտետ | 72.425 | 70.6 | 74.18 | 72.66 | 73.4 | 71.75 |
| 2 | Ստոմատոլոգիական ֆակուլտետ | | | 57.3 | 27.2 | 57.3 | 27.2 |
| ***Ընդամենը*** | | ***72.4*** | ***70.6*** | ***65.7*** | ***49.9*** | ***65.3*** | ***49.5*** |
| **Ստոմատոլոգիայի** | | | | | | | |
| 1 | Ստոմատոլոգիական ֆակուլտետ | 63.8 | 51,2 | 66,9 | 67,8 | 67,9 | 60,4 |
| ***Ընդամենը*** | | ***63.8*** | ***51,2*** | ***66,9*** | ***67,8*** | ***67,9*** | ***60,4*** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **66.9** | **57.6** | **66.2** | **53.3** | **65.5** | **56.8** |

Արդյունքում պարզվեց, որ տարվա կտրվածքով ամբիոնների ընդհանուր առաջադիմությունը կազմել է 65,5 %, իսկ որակականը՝ 56,8%:

Ընդհանուր առաջադիմության բարձր տոկոս է գրանցվել «Թերապևտիկ առարկաների» ամբիոնում, իսկ ցածր՝ «Հումանիտար առարկաների» ամբիոնում:

Որակական առաջադիմության բարձր տոկոսը գրանցվել է «Կլինիկական առարկաների» ամբիոնում, իսկ ցածրը՝ «Բնագիտական առարկաների» ամբիոնում:

Ըստ դասընթացների՝

- բուժական ֆակուլտետում բարձր առաջադիմություն է գրանցվել «Ներքին հիվանդություններ», «Վիրաբուժական հիվանդություններ», «Դատական բժշկություն» առարկաներից, իսկ ցածր՝ «Լատիներեն», «Մարդու անատոմիա», «Հյուսվածաբանություն» առարկաներից:
- ստոմատոլոգիական ֆակուլտետում բարձր առաջադիմություն է գրանցվել «Օրթոդոնտիա», «Վիրաբուժական պրոպեդտիկա» առարկաներից, ցածր՝ «Լատիներեն», «Ախտաբանական անատոմիա», «Դեղաբանություն», «Մաթեմատիկա» առարկաներից:

Բնականաբար, առանձին դասախոսների մոտ ցածր է առաջադիմության ցուցանիշները, /Հակոբյան Ժ, Մինասյան Ա., Հունանյան Ն, Աղաբեկյան Լ. Ղուկասյան Ն., Մարտիրոսյան Լ./, որոնց մոտ գերակշռում են բավարար գնահատականները:

Ամբիոններին տրվել է համապատասխան հանձնարարականներ բոլոր բացթողումները և թերությունները վերացնելու ուղղությամբ:

- Համալսարանում հետզհետե ավելանում է օտարերկրացի ուսանողների թվաքանակը: Հաշվետու տարում համալսարանում սովորել են օտարերկրացի 116 ուսանողներ՝ Իրաքից՝ 70, Հնդկաստանից՝ 37, Իրանից՝ 8, Մեծ Բրիտանիայից՝ 1 :

2016-2017 ուսումնական տարվա համեմատ, համարյա կրկնակի, ավելացել են Իրաքից եկած ուսանողները, իսկ Հնդկաստանի նախկին 3 ուսանողի համեմատ, այս տարի սովորել են 37-ը:

2016-2017 ուսումնական տարվա առաջին կուրս ընդունված 28 օտարերկրացի ուսանողների համեմատ հաշվետու ուսումնական տարում ընդունվել է 73 ուսանող:

- 2017-2018 ուսումնական տարվա տարեսկզբին բուժական և ստոմատոլոգիական ֆակուլ-տետների անընդհատ և ինտեգրացված, բակալավրի, մագիստրոսի կրթական ծրագրերով սովորել են թվով 188, իսկ տարեվերջին՝ 169 ուսանող:

  2017-2018 ուսումնական տարում համալսարանում գործել է նաև նախապատրաստական կուրս, որտեղ սովորել և ավարտել են թվով 10 օտարերկրացի ուսանողներ /աղյուսակ 3/: Հաշվետու տարում կազմակերպվել է նախապատրաստական կուրսի դասընթացներ: Նախապատրաստական կուրսի ավարտական քննությունների դրական արդյունքների հիման վրա թվով 8 ուսանողների տրվել է վկայական:

Աղյուսակ 3

| Բուժական ֆակուլտետ | | | | Ստոմատոլոգիական ֆակուլտետ | | | | Ընդմենը | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Կուրս | Տարե-սկիզբ | Տարե-վերջ | Շրջանավ. | Կուրս | Տարե-սկիզբ | Տարե-վերջ | Շրջանավ. | Տարե-սկիզբ | Տարե-վերջ | Շրջանավ. |
| I | 49 | 48 | - | I | 22 | 12 | - | 71 | 60 | - |
| II | 18 | 17 | - | II | 9 | 8 | - | 27 | 25 | - |
| III | 11 | 9 | - | III | 22 | 21 | - | 33 | 30 | - |
| IV | - | - | - | IV | 14 | 13 | 13 | 14 | 13 | 13 |
| Մագ. I | 8 | 7 | - | Մագ. I | 12 | 11 | - | 20 | 18 | - |
| Մագ.II | 5 | 5 | 5 | Մագ.II | 18 | 18 | 18 | 23 | 23 | 23 |
| Ընդամ. | 91 | 86 | 5 | Ընդ. | 97 | 83 | 31 | 188 | 169 | 36 |
| Նախապատրաստական կուրս | | | | | | | | 10 | 10 | |
| Օտարազգի ուսանողներ | | | | | | | | 114 | 98 | |

Բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետներում, 2017-18 ուսումնական տարվա ընթացքում, ուսանողների շարժն ունի հետևյալ պատկերը՝

Աղյուսակ 4

| Ֆակուլտետ | Հեռացում | Ազատում | Տարկետում | Տեղափոխում ստոմ. /բուժ ֆակ. | Տեղափոխում ստ. /բուժ. ֆակ.-ից | Վերականգ. | Ընդունում, այլ բուհից տեղափ. |
|---|---|---|---|---|---|---|---|
| Բուժական | 6 | 3 | | 3 | 1 | | 7 |
| Ստոմատոլոգիական | 6 | 9 | 3 | 1 | 3 | 3 | 5 |
| Ընդամենը | 12 | 12 | 3 | 4 | 4 | 3 | 12 |

Ուսանողների շարժի հետ կապված փոփոխությունների մասին պարբերաբար տեղեկացվել են ուսումնական մասը, ամբիոնները և հաշվապահությունը:

- Փետրվար, սեպտեմբեր ամիսներին կազմակերպվել են աշնանային և գարնանային կիսամյակների լուծարքների I և II փուլերը, որոնցից հետո ամփոփվել են ֆակուլտետների կիսամյակային, տարեկան ընդհանուր ու որակական առաջադիմությունը /աղյուսակներ 5,6,7/:

Աղյուսակ 5

**ԲՈՒԺԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ

| Կուրս | Աշնանային կիսամյակ | | Գարնանային կիսամյակ | | Տարեկան առաջադիմ. | |
|---|---|---|---|---|---|---|
| | Ընդհ.առաջ.% | Որակ.առաջ.% | Ընդհ.առաջ.% | Որակ.առաջ.% | Ընդհ.առաջ.% | Որակ.առաջ.% |
| I | 65,5 | 50,5 | 62,6 | 47,5 | 64,0 | 49,0 |
| II | 68 | 65,4 | 71 | 67,2 | 69,5 | 66,3 |
| III | 56.2 | 33 | 65,5 | 51,3 | 60,8 | 42,1 |
| I մագ. | 65 | 70 | 63,7 | 82 | 64,3 | 76,0 |
| II մագ. | 80 | 80 | 77 | 71 | 78,5 | 75,5 |
| **Ընդամենը** | **67,0** | **59,8** | **68,0** | **63,8** | **67,5** | **61,8** |

Բուժական ֆակուլտետում ձմեռային քննաշրջանի ակադեմիական պարտքերի քանակը 89-ն է, ամառային քննաշրջանի ակադեմիական պարտքերի քանակը՝ 88:

Բարձր առաջադիմություն է գրանցվել մագիստրատուրայի 2-րդ կուրսում՝ 78,5%, ցածրը՝ երրորդ կուրսում՝ 60,8 %:

Աղյուսակ 6

**ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ

| Կուրս | Աշնանային կիսամյակ | | Գարնանային կիսամյակ | | Տարեկան առաջադիմ. | |
|---|---|---|---|---|---|---|
| | Ընդհ.առաջ.% | Որակ.առաջ. % | Ընդհ.առաջ. % | Որակ.առաջ. % | Ընդհ.առաջ. % | Որակ.առաջ. % |
| I | 56 | 41 | 52,7 | 31 | 54,3 | 36 |
| II | 61 | 57 | 65,4 | 50 | 63,2 | 43,5 |
| III | 65,0 | 52,5 | 67,7 | 58,6 | 66,3 | 55,5 |
| IV | 68,8 | 56,5 | 71,3 | 63 | 70 | 59,6 |
| I մագ. | 63,4 | 46,2 | 67,5 | 48 | 65,4 | 47,1 |
| II մագ. | 68,6 | 61 | 68,3 | 61,5 | 68,4 | 61,2 |
| **Ընդամենը** | **63,8** | **49,5** | **65,5** | **52,0** | **64,6** | **50,5** |

Ստոմատոլոգիական ֆակուլտետում ձմեռային քննաշրջանի ակադեմիական պարտքերի քանակը 48 է, ամառային քննաշրջանի ակադեմիական պարտքերի քանակը՝ 45:
Բարձր առաջադիմությունը գրանցվել է 4-րդ կուրսում՝ 70%, ցածրը՝ 1-ին կուրսում՝ 54,0%, որտեղ և 4 ուսանողներ հեռացվել են ակադեմիական ցածր առաջադիմության համար:

Աղյուսակ 7

ԲՈՒԺԱԿԱՆ ԵՎ ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ

ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ

| Ֆակուլտետ | Աշնանային կիսամյակ | | Գարնանային կիսամյակ | | Տարեկան առաջադիմ. | |
|---|---|---|---|---|---|---|
| | Ընդհ. առաջ.% | Որակ.առաջ. % | Ընդհ.առաջ. % | Որակ.առաջ. % | Ընդհ.առաջ. % | Որակ.առաջ. % |
| Բուժական | 67,0 | 59,8 | 68,0 | 63,8 | 67,5 | 61,8 |
| Ստոմատոլոգիա-կան | 63,8 | 49,5 | 65,5 | 52,0 | 64,6 | 50,5 |
| **Ընդամենը** | **65,3** | **54,6** | **66,7** | **57,9** | **66,0** | **56,15** |

Համեմատաբար բարձր առաջադիմություն է գրանցվել բուժական ֆակուլտետում:
Ցածր առաջադիմություն է գրանցվել ստոմատոլոգիական ֆակուլտետի 1-ին կուրսում:
Ուսումնական տարում գերազանց առաջադիմություն են ցուցաբերել 9 ուսանողներ՝

– բուժական ֆակուլտետ՝ 5 /Շեբա Մարի Ռոյմոն, Սաիմաա Բակր Մալվուդ, Հակոբյան Օվսաննա, Սիմոնյան Փիրուզա, Ալեքսանյան Անուշ/,
– ստոմատոլոգիական ֆակուլտետ՝ 4 /Ֆատեմեհ Դուստդարարաբի, Նազարյան Օֆելյա, Սարգսյան Քրիստինե, Մանուկյան Հռիփսիմե/:

Վերլուծությունը ցույց տվեց, որ բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետներում երկու կիսամյակներում առաջադիմությունը ցածր է եղել «Լատիներեն», «Մաթեմատիկա, ինֆորմատիկա», «Ընդհանուր և կենսօրգանական քիմիա», «Հյուսվածաբանություն», «Դեղաբանություն», «Տեղագրական անատոմիա» առարկաներից:

Մտահոգիչ է ստուգարքներին և քննություններին անհարգելի բացակայությունների հարցը, որը առավել շատ կապված է կենցաղային, անձնական որոշ հարցերի հետ:

➢ Մասնակցություն է եղել 2017-2018 ուսումնական տարվա երկու ֆակուլտետների ամփոփիչ ավարտական ատեստավորումներին, որոնք անցել են կազմակերպված, վերահսկվել է ողջ ընթացքը:

«Բուժական գործ» մասնագիտության մագիստրատուրայի ավարտական ատեստավորման ընդհանուր առաջադիմությունը կազմել է 74,6 տոկոս /աղյուսակ 8/:

Աղյուսակ 8

**ԲՈՒԺԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ

ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ

| N | Առարկա | Ընդհ. առաջադ.% | Որակ. առաջադ.% |
|---|---|---|---|
| 1. | Ներքին հիվանդություններ և մանկաբուժություն | 74 | 60 |
| 2. | Վիրաբուժական հիվանդություններ | 80 | 60 |
| 3. | Մանկաբարձություն և գինեկոլոգիա | 70 | 40 |
| Ընդամենը | | **74,6** | **53,3** |

«Ստոմատոլոգիա» մասնագիտության ավարտական ատեստավորումների ընդհանուր առաջադիմությունը կազմել է՝

- Բակալավրիատ՝ 70,0 տոկոս,
- Մագիստրարուրա՝ 71 տոկոս /աղյուսակներ 9,10/:

Աղյուսակ 9

**ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ

ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ

| N | Առարկա | Ընդհ. առաջադ. % | Որակ. առաջադ. % |
|---|---|---|---|
| 1. | Թերապևտիկ ստոմ.և մանկ.թեր.ստոմ. | 67 | 38,4 |
| 2. | Վիրաբուժական ստոմ. և մանկ.վիր.ստոմ. | 70 | 61,5 |
| 3. | Օրթոպեդիկ ստոմ. և օրթոդոնտիա | 73 | 69 |
| Ընդամենը | | **70,0** | **56,3** |

Աղյուսակ 10

**ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ

ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ

| N | Առարկա | Ընդհ. առաջադ. % | Որակ. առաջադ. % |
|---|---|---|---|
| 1. | Թերապևտիկ ստոմ.և մանկ.թեր.ստոմ. | 75 | 77,7 |
| 2. | Վիրաբուժական ստոմ. և մանկ.վիր.ստոմ. | 67,2 | 55,5 |
| 3. | Օրթոպեդիկ ստոմ. և օրթոդոնտիա | 70 | 61,1 |
| Ընդամենը | | **70,7** | **64,7** |

Հաշվետու տարում համալսարնի «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտությունների ամփոփիչ ատեստավորման առաջադիմության արդյունքները ներկայացված են աղյուսակ 11-ում:

Աղյուսակ 11

**ԲՈՒԺԱԿԱՆ ԵՎ ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ** ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ

ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ

ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ

| N | Ֆակուլտետ | Ընդհ. առաջադ. % | Որակ. առաջադ. % |
|---|---|---|---|
| 1. | Բուժական | 74,6 | 53,3 |
| 2. | Ստոմատոլոգիական | 70,3 | 60,5 |
| Ընդամենը | | **72,4** | **57** |

- 2017-2018 ուս. տարում համալսարանն ունեցել է շուրջ 36 շրջանավարտ՝
  - «Բուժական գործ»՝ 5, որից 2-ը ստացել են գերազանցության դիպլոմ /Փիրուզա Սիմոնյան, Անուշ Ալեքսանյան/,
  - «Ստոմատոլոգիա»՝ բակալավր՝ 13, մագիստրատուրա՝18, որից 2-ը ստացել են գերազանցության դիպլոմ /Նազարյան Օֆելյա, Մանուկյան Հռիփսիմե/:

  Սահմանված ժամկետներում դիպլոմները և նրանց հավելվածները հանձնվել են շրջանավարտներին: ՀՀ ԿԳ նախարարություն են ներկայացվել 2017-2018 ուսումնական տարվա երկու ֆակուլտետների ամփոփիչ ատեստավորումների փաթեթները:
- 2017-2018 ուսումնական տարվա 091201-«Բուժական գործ» և 091101-«Ստոմատոլոգիա» մասնագիտությունների ամփոփիչ ատեստավորումների հանձնաժողովների նախագահների հաշվետվություններն ավելի վերլուծական են, և մասնագետների պատրաստման որակի, գործնական կարողությունների, հմտությունների բարձրացման առումով արվել են մի շարք արժեքավոր դիտողություններ ու առաջարկներ:

➢ Հաշվետու տարվա աշնանային և գարնանային կիսամյակներում ուսումը շարունակելու նպատակով համալսարան են ընդունվել այլ բուհերում ուսանած թվով 12 ուսանողներ, որոնցից՝
- Բուժական ֆակուլտետ՝ 7,
- Ստոմատոլոգիական ֆակուլտետ՝ 5:

Բուժական ֆակուլտետ ընդունված մեկ ուսանող ավարտել է Հայաստանի պետական ագրարային համալսարանի անասնաբուժական ֆակուլտետը և ունի կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

- Անցկացվել են խորհրդակցություններ այլ բուհերից տեղափոխված և ընդունված ուսանողների հետ, ծանոթացվել է ԱԲՀ-ում կրթության կազմակերպման առանձնահատկություններին, ուսանողների հետ կապված համալսարանում գործող կարգերին, տարվել է համապատասխան աշխատանք՝ կրթական նոր միջավայրին ինտեգրվելու համար:

- Կատարվել են ուսանողների առարկայական տարբերությունների հաշվառում, կազմակերպվել են համապատասխան խորհրդատվությունների անցկացում և հաստատված ժամանակացույցով առարկայական տարբերությունների հանձնում, որոնց մասին ժամանակին տեղյակ են պահվել բոլոր ուսանողները:
- Առարկայական տարբերությունների, դրանց ժամանակացույցի մասին ժամանակին տեղեկացվել են նաև համապատասխան ամբիոններն ու դասախոսները:
- Վերլուծությունը ցույց է տալիս, որ հիմնականում առարկայական տարբերություն են հանդիսանում համալսարանի ուսումնական պլանում ընդգրկված որոշ առարկաներ՝ «Դեղաբույսերի մորֆոլոգիա, ֆիզիոլոգիա», «Ֆարմակոգնոզիա», «Ընդհանուր և բժշկական հոգեբանություն» առարկաները:

- Համալսարանի դասախոսների համար կազմակերպվել է խորհրդակցություն, որտեղ զեկուցումով հանդես է եկել դեկանը /08.06.18թ./ և ներկայացրել նորովի մշակված որոշ կարգերի, հատկապես «Ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման համակարգի», «Շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման», «Ուսանողների փոխադրման, հեռացման/ազատման, վերականգնման» կարգերի և «Խորհրդատուների գործունեության» մասին:

**Եզրակացություններ, առաջարկներ**

- Բարելավել համալսարանի ընդունելության պլանավորումը՝ անպայման ներգրավելով հայ ուսանողներին և ստեղծել անհրաժեշտ նախադրյալներ դիմորդների կայուն հոսքի և ուսանողների համակազմի պահպանման համար:
- Բուհի առանձնահատկությունից ելնելով՝ ուսումնական պլաններում, առաջին և երկրորդ կուրսերում, ընդգրկված են որոշ առարկաներ, որոնք չեն անցնում այլ բուհերում, և բարձր կուրսեր տեղափոխվող, նոր ընդունված բոլոր ուսանողները ունենում են այդ առարկաներից տարբերություններ, բնականաբար, ավելանում է կրեդիտների քանակը և դրանից կախված պակասում է ուսանողների ներհոսքը: Նկատի ունենալով այդ հանգամանքը և կարևորելով այդ առարկաների գիտելիքները, առաջարկվել է, որ դրանք ուսումնական պլաններում տեղափոխվեն դասավանդվելու ավելի բարձր կուրսերում:

- Մտահոգիչ է առաջին կուրսերում որոշ առարկաների՝ «Մաթեմատիկա, ինֆորմատիկա», «Ընդհանուր և կենսօրգանական քիմիա» առարկաների ընդհանուր առաջադիմության ցածր մակարդակը, «Մարդու անատոմիա», «Լատիներեն» առարկաների որակական առաջադիմությունը: Պետք է միջոցներ ձեռնարկել և բարելավել վերոնշյալ դասընթացների դրվածքը:
- Մտահոգիչ է նաև ստուգարքներին և քննություններին անհարգելի բացակայությունների հարցը, որը հիմնականում կապված է կենցաղային որոշ հարցերի հետ:

  Չնայած բազմաթիվ զգուշացումներին, դեռևս կան զգալի թվով ուսանողներ, ովքեր լուրջ չեն վերաբերում և անհարգելի պատճառով չեն ներկայանում քննություններին. այսպես՝ ամառային քննաշրջանին ավելի շուտ մեկնելով իրենց երկիր կամ ձմեռային քննաշրջանին ուշացումով են ներկայանում: Ուսանողներին զգաստացնելու կապակցությամբ առաջարկվել էր գիտելիքների գնահատման կարգի լուծարքներ բաժնում փոփոխություն մտցնել, այն է՝ լուծարքին ուսանողը կարող է գնահատվել և ստանալ ընդամենը անցողիկ միավորը /51/, որն արդեն գործելու է 2018-2019 ուսումնական տարվանից:

## 4. ԳԻՏԱԿԱՆ ՄԱՍԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

***Գիտական ներուժ***

Համալսարանի գիտաուսումնական գործընթացում ընդգրկված են թվով 67 դասախոս, այդ թվում պրոֆեսոր՝ 1, գիտությունների դոկտոր՝4, դոցենտ՝ 11, գիտությունների թեկնածու՝17:

2017-2018 ուստարում ՀՀ գրախոսվող ամսագրերում հրատարակված աշխատանքները՝ 3, միջազգային ամսագրերում հրատարակված հոդվածները՝ 3:

2017-2018 ուստարում հանրապետական և միջազգային կոնֆերանսներին մասնակցել են 7 դասախոս /աղյուսակ 12/:

Աղյուսակ 12

| N | *Ազգանուն, անուն, հայրանուն* | *Կոնֆերանսի անվանումը* |
|---|---|---|
| 1. | Բաղալյան Արամ Գրիգորի   բ.գ.դ. | Միջազգային կոնֆերանս 2017թ Նյու Յորք |
| 2. | Մարգարյան Արմինե Արմենի կ.գ.թ. | Համահայկական կոնֆերանսներ /1/ 2017 |
| 3. | Բազուկյան Ինգա Լևոնի կ.գ.թ. | Համահայկական կոնֆերանսներ /2/ 2017թ, 2018թ, Միջազգային կոնֆերանս Սան Դիեգո 2017, 2018թ - Սոֆիա |
| 4. | Մկրտչյան Նարեկ Սերգեյի  բ.գ.թ. | Համահայկական կոնֆերանսներ /1/ 2018թ |
| 5. | Ջավրուշյան Հայարփի Գևորգի կ.գ.թ. | Համահայկական կոնֆերանսներ /2/ 2017թ, Միջազգային կոնֆերանս  Յերուսաղեմ 2017թ |
| 6. | Գրիգորյան Տաթևիկ Սամվելի | Համահայկական կոնֆերանսներ /1/ 2018թ |
| 7. | Կիրակոսյան Վահագն Պերճի բ.գ.դ. պրոֆեսոր | Միջազգային կոնֆերանս  /1/  Հայաստան 2017թ Համահայկական կոնֆերանսներ /2/ 2017թ |

Վերապատրաստում են անցել 8 դասախոս /աղյուսակ13/:

Աղյուսակ 13

| N | *Ազգանուն, անուն, հայրանուն* | Տարեթիվ | Կազմակերպություն | Որակավորում |
|---|---|---|---|---|
| 1. | Ջավրուշյան Հայարփի Գևորգի կ.գ.թ. | 2017թ. 9-14 september | The Federation of the European Biochemical Societies, FEBS and The Israelli Society for Biochemistry and Molecular Biology, ISBMB Israel Yerusalem | From molecules to cells and back |
| | | 2017թ.2-6 հոկտեմբեր | Մանրէաբանության Ամերիկյան Ասոցիացիա | ASM Week in Armenia: Microbiologi Today |
| | | 2018թ. 04.04.-06.04 | Reseach Centre of Natural Sciences, Hungarian Academy of Sciences, Budapest | FEBS Advanced Course Workshop |
| | | 2017թ. 28.09-30.09 | «Armbiotecnology» NAS RA | 4th International Scientific Conference of Young Researchers |
| 2. | Գրիգորյան Տաթևիկ Սամվելի | 07.05-14.05 2018 թ. | Մ. Հերացու անվան Երևանի պետական համալսարան | Ֆարմակոլոգիա |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3. | Կիրակոսյան Վահագն Պերճի բ.գ.դ. Պրեֆեսոր | 24.05-26.05 2018 | Հայաստանի Ստոմատոլոգների ասոցիացիա | Ատամնաբուժություն |
| 4. | Բաղալյան Արամ Գրիգորի բ.գ.թ. | 01.10-07.10 2017 | Weill Cornell Medicine Զալցբուրգ | Վիրաբուժություն |
| | | 01.10-07.10 2017 | Memorial Sloan Kettering Cancer Center, New York | Վիրաբուժություն |
| | | 08.02-09.02 2018 | Асоцация эндокринных хирургов Санкт-Петербург | Վիրաբուժություն |
| 5. | Գալստյան Լուսինե Էդիկի բ.գ.թ. | 05.03-15.03 2018 | Հայաստանի Ամերիկյան համալսարան | Ատամնաբուժություն |
| 6. | Միրզոյան Նարինե Մուրադի | 10.05-01.06 2018 | Հայաստանի ստոմատոլոգների ասոցիացիա | Ատամնաբուժություն |
| | | 12.11.2017 | GEORGIAN ASSOCIATION OF PEDIATRIC DEMTISTRY | Ատամնաբուժություն |
| | | 03.03. 2018 | AESTHETIC MEDICINE AND LASER TECHNOLOGY CONGRESS | Ատամնաբուժություն |
| 7. | Սարգսյան Աննա Վլադիմիրի բ.գ.թ. | 02.03-05.03 2018 | AAAAI/WAO Joint Congress, Orlando, Florida USA | Global environmental change and respiratory health |
| 8. | Մարգարյան Արմինե Արմենի կ.գ.թ. | 02.10-06.10 2017 | American society for microbiology Armenia Erevan | Մանրէաբանություն |

2017-2018 ուստարում գիտական մասը հաջողությամբ իրականացրել է իր առջև դրված խնդիրները՝ նպաստելով գիտաուսումնական կառավարմանը, համակարգել է կատարվող աշխատանքները:

2017-2018 ուստարում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Անցկացվել է սեմինար-համագործակցություն TEMPUS-ի ծրագրով,
- Ներկայացվել է պրոֆ. Է. Մինասյանի «Օրգանիզմի էներգոինֆորմացիոն համակարգի ռեզոնանսային մեթոդով ախտորոշում արևելք–արևմուտք ինտեգրալ մոտեցմամբ» խորագրով ուսումնական ձեռնարկը,
- 2017թ. հոկտեմբերի 23-ին տեղի է ունեցել սեմինար համագործակցության նպատակով: Ներկայացրեցին Երևանի պետական համալսարանի կենսաբանական ֆակուլտետի

մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի աշխատակիցները, որոնք ներկայացված են Լոնդոնի Վեստմիստերի կողմից առաջադրված TEMPUS 2013 ծրագրում,

- Հոկտեմբերի 30-ին 2017թ. տեղի է ունեցել սեմինար Գերմանիայի Բորկեն քաղաքի բժշկական կլինիկայի օնկոլոգիայի բաժնի ղեկավար բ.գ.դ. Քրիստոֆ Ռասելի կողմից՝ «Ինչպես ապրել 100 տարի» թեմայով,
- 2017թ. հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 2-ը Իրանի Արթմերսման ինստիտուտը Ավանդական բժշկության համալսարանում անցկացրեց եռօրյա կարճ դասընթաց,
- 2018թ. փետրվարի 1-ին Ավանդական բժշկության համալսարանը հյուրընկալեց «Իրանի մերսման կենտրոնի» ուսանողներին: Եռօրյա դասընթացների ընթացքում ուսանողները ունկնդրեցին «Բարձրագույն ասեղնաբուժություն», «Վերականգնողական մերսում» թեմաներով դասախոսություններ, ինչպես նաև զուգահեռ մասնակցեցին գործնական պարապմունքներին: Դասախոսությունը վարեց իրանահայ ասեղնաբույժ, դասախոս Էդվին Տեր-Ղազարյանը: Դասընթացի վերջում իրանցի ուսանողները ստացան հավաստագրեր:
- 2018թ. մարտի 6-ին գերմանացի մասնագետ պրոֆեսոր Ալաա Էլ Դին Էլշարքավին հանդես եկավ «Գլխացավի վիրաբուժական բուժում» թեմայով:

2017-2018 ուսումնական տարում Գիտական մասը շարունակել է ծավալել իր գործունեությունն Ուսանողական գիտական ընկերության աշխատանքների որակի բարելավման ուղղությամբ:

Նպաստել է ամբիոնների կողմից գիտաժողովների, սեմինարների և դասախոսությունների հաջողությամբ անցկացնելուն, լավագույն աշխատանքները ընտրելու և համալսարանի ուսանողական գիտաժողովներին դրանք ներկայացնելու համար:

Ուսանողները նույնպես ընդգրկվել են գիտահետազոտական գործընթացներում: Ցանկացողներից ընտրվել են մի քանի խումբ ուսանողներ, որոնք իրենց ղեկավարների հետ կատարում են հետազոտություններ ընտրված թեմաների շուրջ:

**Սարգսյան Աննա** /բժշկակենսաբանական առարկաների ամբիոն/

Հետազոտության նպատակն է հետազոտել օտարերկրյա /քուրդ/ ուսանողների ինքնազգացողությունը Հայաստանի պայմաններում, համեմատել նրանց բնակավայրում

ապրելու պայմանների հետ, պարզել ուսանողների ադապտացիայի աստիճանը ներկա պայմաններում՝ հաշվի առնելով սննդի, ապրելավայրի, ապրելակերպի և բնակլիմայական պայմանների փոփոխությունը:

Այժմ կատարվում են աշխատանքներ արդյունքների մշակման և ներկայացման վերաբերյալ: Հետազոտության մեջ ընդգրկված ուսանող՝ Մոհամեդ Սաման:

**Մինասյան Արսեն բ. գ. դ** / բժշկակենսաբանական առարկաների ամբիոն /

Տոպոգրաֆիկ անատոմիայի և օպերատիվ վիրաբուժության ուսանողական գիտական խմբակի ստեղծման նպատակը անալիտիկ և ստեղծագործական հմտությունների զարգացման հիման վրա ուսանողների մասնագիտական պատրաստվածության մակարդակի բարձրացումն է, գիտական համակարգային մտածողության ձևավորումը, գիտահետազոտական գործունեությամբ զբաղվելու կարողություն և ցանկություն ունեցող շնորհալի և տաղանդավոր ուսանողների բացահայտումը, մանուալ հմտությունների կատարելագործումը, վիրաբուժական և կից ոլորտներում որակավորված շրջանավարտների պատրաստումը:

Գիտական գործունեության ընթացքում ուսանողները կաշխատեն գրականության հետ, կվերլուծեն ստացված արդյունքները, ինչպես նաև կտիրապետեն հետազոտության փորձարարավիրաբուժական մեթոդներին:

Պլանավորվում է անցկացնել փորձարարական վիրաբուժական միջամտություն 3 խումբ կենդանիների վրա՝

- Կլինիկաներում ամենից հաճախ իրականացվող վիրահատությունները (օրգանի վիրահատում կամ հեռացում, տարատեսակ պլաստիկ վիրահատություններ, անդամահատումներ և այլն):
- Ֆիզիոլոգիայում կիրառվող վիրահատություններ տարատեսակ օրգանների և համակարգերի գործունեության ուսումնասիրման համար (ֆիստուլներ, օրգանների հատումներ, էլեկտրոդների ներմուծում և այլն),
- Վիրահատություններ կամ այլ միջոցներ, որոնց միջոցով առաջանում են ախտաբանական վիճակներ (խոցային հիվանդություններ, դիաբետ և այլն):
- Փորձերի ընթացքում կուսումնասիրվեն կենդանիների օրգանների և անատոմիական գոյացությունների առանձնահատկությունները:

**Հայարփի Ջավրուշյան ք. գ. թ.** /բնագիտական առարկաների ամբիոն/

Ուսանողներ՝ Շադ Շվան, Աուհամեդ Դլշադ, Դանա Բեժան, Յուսիֆ Մոհսին Թահսին

Թեման՝ Քաղցկեղ, օնկոնյութափոխանակություն

Նպատակն է ուսումնասիրել կենսաքիմիական մեթոդներ, որոնք վերաբերում են օնկոլոգիական նյութափոխանակության, առնետների անատոմիայի, դիսեկցիայի ուսումնասիրությանը, աշխատել կենսաքիմիական լաբորատոր սարքավորումների հետ, ուսումնասիրել քաղցկեղի տեսական և գործնական մոդելները, գիտական եւ ուսումնական գրականությունը:

## 5. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ

Համալսարանի արտաքին կապերի բաժինը համալսարանի միջազգայնացմանը նպաստող ենթակառուցվածք է, որն իր գործունեությունն իրականացնում է Արտաքին կապերի բաժնի կանոնակարգի հիման վրա:

Համալսարանի Արտաքին կապերի բաժնի աշխատանքներն իրականացնում են բաժնի վարիչը և բաժնի առաջատար մասնագետը՝ ռեկտորի և համալսարանի ստորաբաժանումների հետ համատեղ:

Բաժնի գործունեության հիմնական նպատակն է համալսարանի Ռազմավարական ծրագրում ամրագրված խնդիրների լուծումը, որը նպատակաուղղված է օտարերկրյա ուսանողների ներգրավման ու երկրների աշխարհագրության մեծացմանը, կրթական և գիտահետազոտական բնագավառներում համալսարանի միջազգային համագործակցության ընդլայնմանը, ինչպես նաև Համալսարանի ինտեգրմանը միջազգային գիտական և կրթական գործընթացներին ու ծրագրերին և այլն:

### 5.1. ԱԲՀ ուսանողների ընդունելություն և հրամանագրում

- 2017թ. հուլիսի 12-20-ը ԱԲՀ օտարերկրյա ուսանողների բաժնի ղեկավարը Իրաքի Քուրդիստան նահանգի Սուլեյմանի և Էրբիլ քաղաքներում կայացած կրթության ցուցահանդեսներին ներկայացրեց համալսարանը: Ցուցահանդեսին իրենց ակտիվ մասնակցությունն ունեցան նաև Ավանդական բժշկության համալսարանում սովորող քուրդ ուսանողները: Այս ծրագրի շնորհիվ ԱԲՀ-ն ստացավ շուրջ 35 քուրդ դիմորդների հայտեր:

- Մայիս-հունիս ամիսներին բաժնի կողմից կատարվել է օտարերկրյա դիմորդների ընդունելության փաստաթղթերի և չափորոշիչների նախապատրաստում:
- ՀՀ ԿԳՆ կողմից սահմանված ժամկետներում կատարվել է դիմորդների անձնական դիմումների ու գործերի ուսումնասիրում և ներկայացում ՀՀ ԿԳՆ՝ փորձաքննության:
- Ուսումնական մասի վարիչի և դեկանի հետ համատեղ կատարվել է օտարերկրյա դիմորդների ընդունելության հանձնաժողովի կազմի ընտրություն և հրամանագրում:
- Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին կատարվել է ՀՀ ԿԳՆ համապատասխան հրահանգների հիման վրա ուսանողների հրամանագրում:
- Հոկտեմբերին կատարվել է օտարերկրյա դիմորդների ընդունելություն համալսարանի նախապատրաստական կուրս՝ ՀՀ ԿԳՆ կողմից սահմանված ժամկետներում:
- Հոկտեմբեր ամսվա վերջին կատարվել է համալսարանի օտարերկրյա ուսանողների ընդունելության արդյունքների հաստատում՝ Ուսումնական մասի վարիչի և դեկանի հետ համատեղ:
- Կատարվել է տեղափոխվող ուսանողների ընդունելություն. աշնանային կիսամյակում՝ բուժական ֆակուլտետ՝ 5 ուսանող, ստոմատոլոգիական ֆակուլտետ՝ 1 ուսանող: Գարնանային կիսամյակում՝ բուժական ֆակուլտետ՝ 2 ուսանող, ստոմատոլոգիական ֆակուլտետում տեղափոխվող ուսանողների ընդունելություն չի եղել:

**5.2. Օտարերկրյա ուսանողների ներգրավման գործընթացը**

- Օտարերկրյա ուսանողների ներգրավումը Արտաքին կապերի բաժնի հիմնական գործառույթներից է: Այն իրականացնելու նպատակով բաժինը համագործակցել է ուսանողների ներգրավմամբ զբաղվող օտարերկրյա կազմակերպությունների հետ՝ դիմորդների հայտեր ստանալու նպատակով:

  ԱԲՀ-ի Հնդկաստանի գործընկեր «Քեմփաս Ինթերնեշնլ» ՍՊԸ-ի («Campus International» LLC) հետ 01.11.2017թ. կնքվեց Հնդկաստանից ուսանողների հավաքագրման պայմանագիր: Բրիտանիայի գործընկեր «Սթադի մեդիցին Եւրոփ» ՍՊԸ –ի հետ («Study medicine Europe» LLC) 19/02/2018թ. կնքվեց Միացյալ Թագավորությունից, Իռլանդիայից, Հունաստանից, ԱՄՆ-ից և Ավստրալիայից ուսանողների հավաքագրման պայմանագիր:

- Ուսանողների հավաքագրումը կատարվել է նաև անմիջապես բաժնի կողմից՝ արտերկրներից ստացվող անհատական դիմումների հիման վրա: Ուսանողների ներգրավում համալսարանի կրթական գործընթացին իրականացվել է համաձայն ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից մշակված կարգերի:
- Արտաքին կապերի բաժինը արտահամալսարանական կառույցների հետ գտնվելով մշտական կապի մեջ (էլեկտրոնային, հեռախոսային և այլն)՝ նրանց պարբերաբար տեղեկացրել է ընդունելության կարգի մեջ կատարվող փոփոխությունների մասին, ինչպես նաև նրանց ցուցաբերել է անհրաժեշտ խորհրդատվություն, տեղեկատվություն և աջակցություն ամբողջ տարվա աշխատանքի ընթացքում:
- Դիմորդների դիմումները/հայտերը ներկայացվել են համալսարանի պաշտոնական կամ Արտաքին կապերի բաժնի էլեկտրոնային հասցեներին:

  Բաժնի կողմից նախնական փուլում ճշտվել է դիմորդի քաղաքացիությունը/անձնագրային տվյալները և միջնակարգ/բարձրագույն կրթության վկայականի/այլ վկայականների առկայությունը, ներկայացվել են համալսարանի կողմից առաջարկվող ծառայությունները, առավելություններն ու հնարավորությունները:
- Ուսանողների հավաքագրման գործընթացն իրականացվել է ողջ տարվա ընթացքում:
- Արտաքին կապերի բաժինը աշխատել է ՀՀ Արտաքին գործերի նախարարության հետ՝ օտարերկրյա քաղաքացիներին մուտքի արտոնագիր տրամադրելու հարցում, կատարել է հարցումներ և ստացել պարզաբանումներ:

**5.3.** Արտաքին կապերի բաժնի հիմնական գործառույթներից է նաև օտարերկրյա ուսանողների **կացության քարտերի տրման** կազմակերպման գործընթացը, որի համար բաժինը համագործակցում է ՀՀ Անձնագրային և վիզաների վարչության Կենտրոնական անձնագրային բաժանմունքի հետ:

Կացության քարտերի հետ կապված աշխատանքը կատարվել է 2017թ. սեպտեմբեր – հոկտեմբեր, 2018թ. փետրվար-մարտ ամիսներին՝ ուսանողներին ԲՈՒՀ հրամանագրելուց և ՀՀ ԿԳՆ հաստատում ստանալուց հետո: Նաև 2017թ. սեպտեմբեր –հոկտեմբեր ամիսներին կատարվել է արդեն ԱԲՀ ուսանող հանդիսացող ուսանողների ժամանակավոր կացության քարտերի վերաձևակերպում:

5.4.Արտաքին կապերի բաժնում պահվում են օտարերկրյա ուսանողների **անձնական գործերը**, այսպիսով բաժնի միջոցով է կատարվում օտարերկրյա ուսանողներին վերաբերող փաստաթղթաշրջանառությունը: Ամբողջ տարվա ընթացքում կատարվել է ուսանողների դիմումների ընդունում և փոխանցում համապատասխան ստորամաբաժանումներին, անձնական գործերի վարում, ձևակերպում, թարմացում, արխիվացում:

**5.5.** Բաժնի գործառույթներից է նաև տարաբնույթ միջոցառումների կազմակերպումը: 2017-2018 ուսումնական տարում համալսարանի Ուսխորհրդի և համալսարանի ստորաբա-ժանումների հետ միասին բաժինն իրականացրել է.

- 25.04.2017թ., այց Մեծ Եղեռնի զոհերի հուշարձան,
- 04.02.2018թ., Նոր Տարվան նվիրված միջոցառում հայ և օտարերկրյա ուսանողների, համալսարանի աշխատակիցների և դասախոսների մասնակցությամբ,
- 26.02.2018թ., ԱԲՀ–ում հիմնադրվեց «Հնդիկ ուսանողների ասոցիացիա»-ն: Բացման հանդիսավոր արարողությանը ներկա էր բուհի ղեկավարությունը՝ ռեկտոր Նորիկ Սարիբեկյանի գլխավորությամբ, ինչպես նաև արտահամալսարանական կառույցների հյուրեր: Ասոցիացիան ձեռնամուխ է եղել գիտական, մշակութային և այլ միջոցառումների կազմակերպմանը ամբողջ տարվա ընթացքում:

**5.6.**Տարվա ընթացքում իրականացվել են հանդիպումներ, ժողովներ ուսանողների հետ դեկանի, ուսումնական մասի վարիչի, դասախոսների հետ միասին՝ կարգապահական, ակադեմիական առաջադիմության և այլ հարցերի վերաբերյալ:

**5.7.**Տարվա ընթացքում բաժնի ղեկավարը, ըստ անհրաժեշտության, պատրաստել և ներկայացրել է հաշվետու տեղեկանքներ ԱԲՀ ռեկտորին, ՀՀ ԿԳՆ ստորաբաժանումներ և այլն:

**5.8.**Ընթացիկ ուստարվա ընթացքում Գիտական մասի հետ համատեղ անցկացվել են դասախոսություններ, դասընթացներ, գիտաուսումնական սեմինար, միջազգային գիտուսումնական սեմինարներ:

**5.9. 2017-2018 ուստարում տարեսկզբի դրությամբ օտարերկրյա ուսանողների թիվը** կազմում է 114 ուսանող, 10 դիմորդ, որից՝

բուժական ֆակուլտետ՝ 77 ուսանող. 1-ին կուրս՝ 49 ուսանող, 2-րդ կուրս՝18 ուսանող, 3-րդ կուրս՝10 ուսանող:

ստոմատոլոգիական ֆակուլտետ՝ 37 ուսանող. 1-ին կուրս՝22 ուսանող, 2-րդ կուրս՝9 ուսանող, 3-րդ կուրս՝ 6 ուսանող:

Նախապատրաստական բաժին՝ 10 դիմորդ:

Ստորև ներկայացնենք վերոնշյալ ուսանողների ու դիմորդների քանակն՝ ըստ երկրների:

- Իրաքի քաղաքացիներ՝79
- Հնդկաստանի քաղաքացիներ՝35
- Իրանի քաղաքացիներ՝ 9
- Մեծ Բրիտանիայի քաղաքացի՝1

ԱԲՀ-ի կողմից նաև կազմակերպվել են երկամսյա դասընթացներ, որոնց մասնակցել են 10 ուսանող և ստացել են 02.07.2018թ. են համապատասխան վկայական:

**5.10. Միջազգայնացում.**

- **ԶԼՄ, տեսաֆիլմներ, համացանցի նյութեր.** Արտաքին կապերի բաժնի գործառույթներից է նաև պատրաստել տեսաֆիլմեր՝ համալսարանը լուսաբանելու նպատակով: Այսպիսով, 2017թ. հունիսին նկարահանվեց մոտ 10 րոպեանոց տեսահոլովակ՝ անգլերեն լեզվով: Հոլովակը տեղադրվեց youtube.com կայքում. այստեղ մանրամասն ներկայացված է համալսարանի գործունեությունը, ընթացակարգերը, զետեղված են հարցազրույցներ՝ վերցված ինչպես աշխատակազմի անդամներից, այնպես էլ ուսանողներից: Հոլովակները հնարավորություն են տալիս օտարերկրյա դիմորդին համալիր պատկերացում կազմել Համալսարանի մասին և խթանում են դիմորդների քանակի ավելացմանը:

  Հղումներ.

  - 2017, մայիսի 17, MBBS in Armenia, Indian Students in Armenia, Low fee Medical Universities, https://www.youtube.com/watch?v=WR3ju6YLRNw,
  - 2017, մայիսի 19, MBBS in Armenia USD 3000 p.a. Crown Immigration Armenia, https://www.youtube.com/watch?v=K9jrT_sQiRo,
  - 2017թ. հունիսի 21, University of Traditional Medicine of Armenia, https://www.youtube.com/watch?v=uQsAtZecguY ,

- 2017թ. հունիսի 16, University of Traditional Medicine of Armenia, https://www.youtube.com/watch?v=kWK4V9fg_28,
- 2018, մայիս 29, Հնդկաստանի դեսպան Յոգեշվար Սանգվանի այցը՝ Ավանդական բժշկության համալսարան https://www.youtube.com/watch?v=d2BnpEhOdP8
- 2018թ., մայիսի 30, “Truth about MBBS in Armenia”, https://www.youtube.com/watch?v=7DJXJk0vR5s,
- 2018, հունիսի 26, “The University of Traditional Medicine of Armenia, Campus International, Study MBBS in Armenia!”, https://www.youtube.com/watch?v=n9zrJdWCLP0,
- 2018, հուլիսի 15, STUDY MBBS IN ARMENIA, https://www.youtube.com/watch?v=np4vb8AxSbA,
- 2018, հուլիսի 16, հեռուստահեռարձակում Հնդկաստանում, Study MBBS in Europe: University of Traditional Medicine of Armenia (UTMA) | Education Plus | 10TV, https://www.youtube.com/watch?v=GbjcvTs0t2g&t=873s,
- 2018, նոյեմբերի 1, University of Traditional Medicine Armenia campus tour and student review, https://www.youtube.com/watch?v=alXdSGJkOEM:

➢ **Նյութեր համացանցում ԱԲՀ–ի մասին.** Համալսարանի մասին նյութեր և հայտարարություններ են տեղադրվել ԱԲՀ-ի պաշտոնական կայքում՝ utm.am, որի դիտումները կցված են սույն Հաշվետվության Հավելված 1-ում.

ԱԲՀ-ի մասին տեղեկատվություն կա նաև.

Բրիտանական “Study Medicine Europe” կազմակերպության կայքում՝ https://www.studymedicineeurope.com/university-of-traditional-medicine,

Գլոբալ Քոննեքթըս – ի կայք, http://gcoverseasadmissions.com/course/view.php?id=4,

ԱԲՀ ներկայացված է նաև ՀՀ «ՍՓՅՈՒՌ» որոնողական համակարգում՝ https://www.spyur.am/am/companies/university-of-traditional-medicine/3579,

ԱԲՀ-ն ներկայացված է նաև World Directory of Medical Schools կայքում, որտեղ տեղադրված է տեղեկատվություն ամբողջ աշխարհի բժշկական բուհերի և բժշկական կրթական օջախների վերաբերյալ, https://wdoms.org/ և այլն:

- Արտաքին կապերի բաժնի և ԱԲՀ "Հնդիկ ուսանողների ասոցիացիայի" նախաձեռնությամբ 15.05.2018թ. Համալսարանը հյուրընկալեց ՀՀ-ում Հնդկաստանի Հանրապետության դեսպան Յոգեշվար Սանգվանին: Վերջինիս մասնակցությամբ իրականացվեց «Հնդիկ ուսանողների բարեկեցության ասոցիացիա»–ի հանդիսավոր բացումը: Դեսպանին շնորհվեց համալսարանի Պատվավոր հյուրի վկայական, ինչպես նաև նրան ներկայացվեցին Համալսարանի աշխատանքը, անցած ուղին, տեսլականը, ուսանողները ուղղեցին բազմաթիվ հարցեր:

  Հանդիպումը եզրափակվեց ուսանողական խորհրդի և «Հնդիկ ուսանողների բարեկեցության ասոցիացիա»-ի կազմակերպած մշակութային մասով, որին ներգրավված էին տարբեր ազգերի օտարերկրյա ուսանողներ:
- Արտաքին կապերի բաժնի գործառույթներից է նաև իրականացնել արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման արդյունավետ քաղաքականություն և մեխանիզմներ, ընդլայնել և ամրապնդել արտաքին համագործակցությունը միջազգային կառույցների հետ: Այսպիսով, 12.06.2018թ. Ավանդական Բժշկության Համալսարանը Իտալիայի Հանրապետության «Պոլըֆորմ Ինստիտուտ Ատի Ասոցիացիան»-ի հետ, ի դեմս գործադիր տնօրեն դ. Ջուլիա Իաննաքքոնե-ի կնքեցին համաձայնագիր՝
  - Համատեղ կրթական ծրագրերի մշակման և իրականացման,
  - Ուսանողների և դասախոսների փոխանակման,
  - Համատեղ գիտական, հետազոտական ծրագրերի կազմակերպման,
  - Համատեղ միջազգային և տեղական կոնֆերանսների, սեմինարների կազմակերպման և այլ համագործակցության մասին:
- Միջազգային համագործակցության ընդլայնման նպատակով Արտաքին կապերի բաժնի ղեկավարը «Քեմփաս Ինթերնեշնլ» ՍՊԸ-ի հրավերով 27.06.2018 – 06.07.2018 գործուղվեց Հնդկաստան: Համալսարանը առաջին անգամ հանդես գալով Հնդկաստանի (և հյուսիսային, և հարավային շրջաններում) մի քանի քաղաքներում՝ Դելի, Հարիյանա, Կերալա, Գոա:

Յուրաքանչյուր հանդիպման ժամանակ համալսարանը ներկայացվում էր PDF շնորհանդեսի միջոցով, ինչպես նաև ուսանողներին բաժանվում էին տպված բրոշյուրներ, տեղի էր ունենում հարց ու պատասխան, քննարկում և այլն:

10-օրյա աշխատանքային այցը հնարավորություն տվեց մեծացնել Հնդկաստանի մի շարք քաղաքներում տեղեկատվության տարածումը Ավանդական բժշկության համալսարանի մասին, որի արդյունքում 2018-2019 ուսումնական տարվա համար համալսարանը ակնկալում է հնդիկ դիմորդների թվի զգալի ավելացում:

Նույն շրջանում ստացվեցին բազմաթիվ հայտեր տարբեր կազմակերպություններից՝ 2018-2019 ուսումնական տարվա ընթացքում համագործակցության վերաբերյալ, մասնավորապես Դելիի «Մեդ Ե քուբ» (medECUBE Healthcare India, http://www.medecube.com) կազմակերպությունից՝ ուսանողների փոխանակման և պրակտիկայի անցկացման ուղղությամբ:

- **Ներքին համագործակցություն.** Արտաքին կապերի բաժինը սերտ համագործակցել է համալսարանի բոլոր ստորաբաժանումների հետ՝ մասնակցելով ուսանողների հետ տարվող աշխատանքներին, հանդես գալով որպես համակարգող օղակ ուսանողների և Համալսարանի ստորաբաժանումների միջև:
- Բաժինը աջակցություն է ցույց տվել օտարերկրյա ուսանողներին ինչպես կրթական, այնպես էլ իրավական, առօրյա և այլ հարցերում (հանրակացարանի, բնակարանի որոնում, աջակցություն առողջական հարցերի լուծման մեջ, տեղեկանքների տրամադրում)՝ ստեղծելով հնարավորինս բարենպաստ պայմաններ ուսանողների համար:
- Ամբողջ տարվա ընթացքում ակտիվ կապ է պահվել ուսանողների և նրանց ծնողների հետ սոցիալական ցանցերում, էլէկտրոնային հաղորդագության և հեռախոսակապի միջոցով՝ նրանց հարցերին օպերատիվ լուծում տալու համար:
- Բաժինը նաև համագործակցել է համալսարանի ստորաբաժանումների հետ՝ ուսանողների հաճախելիության ու առաջադիմության հետ կապված հարցերի վերաբերյալ:

**Ավանդական բժշկության համալսարանի պաշտոնական կայքի՝ UTM.am -ի դիտելիության ամփոփում (01.10.2017-20.06.2018)**

| | | |
|---|---|---|
| 1. | UTM.am պաշտոնական կայքի բացումը | 04.10.2017թ. |
| 2. | Սեանս | 6565 |
| 3. | Օգտատերեր | 4329 |
| 4. | Էջի դիտելիությունը | 32904 |

Աղյուսակ 14

| UTM.am կայքի դիտելիությունն ըստ տարածաշրջանների | | |
|---|---|---|
| | **Երկիրը** | **Կայքի դիտելությունը (%)** |
| 1. | Հնդկաստան | 25.11 |
| 2. | Հայաստան | 23.68 |
| 3. | Իրան | 8.86 |
| 4. | Մեծ Բրիտանիա | 8.26 |
| 5. | ԱՄՆ | 3.58 |
| 6. | Ֆրանսիա | 2.65 |
| 7. | Գերմանիա | 2.49 |
| 8. | Իրաք | 2.15 |
| 9. | Հարավային Կորեա | 1.48 |
| 10. | Այլ | 21.74 |

## 6.ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺԻՆ

Որակի ապահովման բաժնի բնականոն աշխատանքներն իրականացվել են՝ հիմք ընդունելով ԱԲՀ-ի ռազմավարական ծրագիրը, ՈԱ բաժնի կանոնադրությունը: Համալսարանն ունի Որակի ներքին ապահովման քաղաքականություն, որն ուղղված է համալսարանի առաքելության և նպատակների իրագործմանը, ներգրավմանը միջազգային կրթական տարածք:

Որակի արտաքին գնահատման և հավատարմագրման համար բավարար հիմքեր ապահովելու նպատակով՝ ԱԲՀ-ն 2017-18 ուստարվա ընթացքում իրականացրել է մի շարք

աշխատանքներ ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության զեկույցի պատրաստման շրջանակում:

Ինքնավերլուծության աշխատանքները մեկնարկել է ռեկտորի 05.10.2017թ. հ.278 հրամանով ձևավորված աշխատանքային խումբը:

Ինքնավերլուծության ձևաչափի պահանջներին համապատասխան՝ տարբեր կառուցվածքային ստորաբաժանումներից կատարվել է անհրաժեշտ փաստաթղթերի ու տվյալների հավաքագրում: Դրանց հիման վրա համապատասխան գործիքների ու մեխանիզմների միջոցով կատարվել է համալսարանի գործունեության բոլոր ոլորտների ուսումնասիրություն, վերլուծություն և գնահատում: Կրթական կարիքների բացահայտման և մատուցվող ծառայություններից բավարարվածության աստիճանի որոշման նպատակով ուսանողների և դասախոսների շրջանում կազմակերպվել և իրականացվել են հարցումներ:

Հարկ է նշել, որ Որակի ապահովման հանձնաժողովի գործունեության շնորհիվ ԱԲՀ-ում վերանայվել են մի շարք փաստաթղթեր և մշակվել նոր համապատասխան կանոնակարգեր և այլ իրավանորմատիվային փաստաթղթեր:

Գիտական խորհրդի կողմից հաստատված կանոնակարգերը շահակիցներին հասանելի դարձնելու նպատակով տեղադրվել են համալսարանի պաշտոնական կայքում:

Վերանայվել և հաստատվել են <<Ստոմատոլոգիա>> և <<Բուժական գործ>> կրթական ծրագրերը (2018-2019 ուստարվա ուսումնական պլանները, առարկայական ծրագրերը): Փոփոխության են ենթարկվել ուսումնական պլանի կառուցվածքը, որոշ առարկաների անվանումներ:

ՄՌԿ և ընդհանուր բաժնի կողմից վերանայվել են աշխատակիցների պայմանագրերը, հստակեցվել նրանց գործառույթները, լիազորություններն ու պարտականությունները:

Գնահատման համակարգի վերանայման հետ կապված ևս կազմակերպվել են հարցումներ դասախոսների և ուսանողների շրջանում, արդյունքների հիման վրա մշակվել է նորը, որը կգործարկվի 2018-2019 ուստարվանից:

Կազմակերպել են տարբեր միջոցառումներ օտարերկրյա դիմորդների ընդունելության հոսքն ապահովելու ուղղությամբ:

Համացանցային կայքերում՝ համալսարանի պաշտոնական կայքում, ֆեյսբուքյան էջում տեղադրվել են համալսարանին վերաբերող գովազդային նյութեր:

Իրականացվել են ինստիտուցիոնալ ինքնագնահատում կատարելու անհրաժեշտ միջոցառումներ:

ԱԲՀ-ի և ՀՖԿՍՊԻ-ի միջև կնքվել է համագործակցության պայմանագիր: Այն հնարավորություն կընձեռի համագործակցել կրթական ծրագրերի համատեղ մշակման ոլորտում,իրականացնել գիտական, մասնագիտական գրականության, մեթոդական ձեռնարկների, աշխատությունների, պարբերականների և այլ նյութերի փոխանակում, համատեղ իրականացնել գիտաժողովներ, սեմինարներ, նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ հետազոտական աշխատանքներ:

Դեկանի հետ համատեղ կազմակերպվել են ամբիոնների համար նախատեսված ՈԱ համակարգի տեղեկատվական աշխատանքներ, խորհրդակցություններ: Ամբիոններում և ստորաբաժանումներում ուսումնասիրվել են վերջին երեք տարիների ընթացքում իրականացված բոլոր աշխատանքների (ուսումնական, գիտական) փաստաթղթերը: Ուսումնասիրությունների ընթացքում բացահայտված բոլոր թերությունները և բացթողումները կարճ ժամանակահատվածում շտկվել են:

Վերջնական տեսքի բերելով ինստիտուցիոնալ ինքնավերլուծության փաթեթը՝ 2018-2019 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի համար կներկայացնենք դիմում-հայտը ՈԱԱԿ հիմնադրամ:

## 7.ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Համալսարանի գիտական խորհրդի գործունեությունը հաշվետու ժամանակաշրջանում ուղղված էր հետագա ուսումնական և գիտական աշխատանքների որակի բարելավմանը, կրթական համակարգի վերակառուցմանը և դրանք միջազգային չափանիշներին համապատասխանեցնելուն: Հաշվետու ժամանակաշրջանում լսվել են հաշվետվություններ համալսարանի ուսումնադաստիարակչական, գիտահետազոտական գործունեության, կրթական համակարգի որակի բարձրացման, երիտասարդ դասախոսների գիտամանկավարժական գործունեության վերաբերյալ: Գիտական խորհրդի նիստերում

ուսումնասիրվել և ամփոփվել են ամբիոններում կատարած ուսումնական աշխատանքները, քննարկվել են հարցեր և արվել առաջարկություններ՝ ընդունելության, ձմեռային, ամառային քննաշրջանների և 2017-2018 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների մասին։

Համաձայն 2017-2018 ուսումնական տարվա գիտական խորհրդի աշխատանքային պլանի՝ գիտական խորհրդի նիստերում քննարկված հարցերի վերաբերյալ ընդունվել են համապատասխան որոշումներ և առաջարկություններ՝ սահմանելով ընդունված որոշումների իրականացման համար հսկողություն։ Գիտական խորհրդի կազմը բաղկացած է եղել 18 անդամներից։

## 8.ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

- 2017-18 ուստարում ԱԲՀ-ի ուսանողական խորհուրդը կազմակերպել է մի շարք միջոցառումներ, ակտիվ մասնակցել և իրականացրել դրանք ըստ աշխատանքային պլանի:
- Ուսումնական տարեսկզբին հանդիսավոր հանդիպում է տեղի ունեցել Գիտելիքի օրվա, ուսումնական տարվա մեկնարկի հետ կապված բոլոր կուրսերի ուսանողների հետ: Ուսանողական խորհուրդը ողջունել է բուհ ընդունված ուսանողներին և ծանոթացրել ուսանողական խորհրդի գործունեությանը:
- Գիտխորհրդի նիստով հաստատվեց Ուսանողական խորհրդի կազմը: Ուսխորհրդի նախագահ ընտրվեց ստոմատոլոգիական ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող Ստանիսլավ Կարապետյանին: Ուսխորհրդի կազմում ընդգրկվեցին 13 ուսանող:
- Ուսխորհրդը և դեկանատը տեղեկացրել են առաջին կուրսի ուսանողներին իրենց պարտականությունների և իրավունքների մասին, ծանոթացրել ներքին կարգապահական կանոններին, իսկ բարձր կուրսերի ուսանողներին՝ տեղի ունենցած փոփոխություններին, եթե այդպիսիք կան:
- 2017թ. սեպտեմբերի 30-ին «Սպիտակ» կենտրոնում տեղի ունեցավ 18-րդ Ուսանողական մարզական խաղերի լողի մրցաշարը, որին մասնակցեցին նաև ԱԲՀ ուսանողները: Ռուբեն Մկրտչանը զբաղեցրեց 1-ին պատվավոր հորիզոնականը 50մ թիկնալողում, Ստանիսլավ

Կարապետյանը՝ 2-րդ պատվավոր հորիզոնականը 50մ Բրաս լողաձում, իսկ Տիգրան Թամազյանը՝ 6-րդ հորիզոնականը 50մ թիկնալողում:

- 2017թ. հոկտեմբերի 9-ին «Ոչ պետական բուհերի ուսանողական խորհուրդ» ՀԿ կազմակերպել էր նկարչական փառատոն՝ «Վրձնի հետքերով»: Ծրագրի կիզակետում երիտասարդներն էին, ովքեր արտահայտում էին իրենց հույզերն ու գաղափարները նկարի միջոցով: Մասնակիցները ստեղծագործում և արարում էին հավասար պայմաններում: Փառատոնին մասնակցում էին նաև պատահական անցորդները, ովքեր ցանկանում էին նկարել և ստանալ մասնագիտական խորհուրդներ մասնակից նկարիչների կողմից:
- 2017թ. նոյեմբերի 17-ին Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում տեղի ունեցավ համերգ՝ նվիրված Ուսանողների օրվան: Ելույթ ունեցան Արամ mp3-ն և Սևակ Խանաղյանը: Տոնին մասնակցեցին նաև ԱԲՀ ուսանողները: Տոնը նշվեց մեծ շուքով և ուսանողները մեծ բավականություն ստացան:
- Ս/թ մարտի 28-ից մինչև ապրիլի 20-ը Հայաստանի երիտասարդական հիմնադրամ «Ոչ պետական բուհերի ուսանողական կենտրոն» ՀԿ-ն կազմակերպել էր «Սպորտային խաղեր 2018» մրցաշարը: Խաղերին մասնակցեցին նաև Ավանդական բժշկության համալսարանի ուսանողները՝ ֆուտզալ, բազկամարտ և սեղանի թենիս մարզաձևերում: Ֆուտզալ մարզաձևում մեր ուսանողները զբաղեցրել են 5-րդ հորիզոնականը: Մասնակիցներն էին Տիգրան Թամազյանը, Սամվել Կարախանյանը, Վրեժ Թավաքալյանը, Հայկ Կուլիջանյանը, Դավիթ Դավթյանը, Ալբերտ Բաղդասարյանը, Գոռ Ղազանչյանը: Բազկամարտի մրցաշարում Հովհաննես Բալմանուկյանը գրավել է 3-րդ, իսկ Ստանիսլավ Կարապետյանը՝ 4-րդ տեղը: Սեղանի թենիսի մրցաշարին մասնակցել են Տիգրան Թամազյանը և Ռուբեն Մկրտչյանը:
- Մասնագիտական կողմնորոշման հետ կապված հանդիպումներ են ունեցել դպրոցների (Ռ. Սարգսյանի անվան <<Էլիտա>> ավագ դպրոց), բժշկական քոլեջների (Երևանի պետական հենակետային բազային քոլեջ, Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ) աշակերտների և ուսանողների հետ:
- Համալսարանի ուսանողները մասնակցել են հարցաթերթիկային հարցումներին կրթական ռեսուրսների բարելավման նպատակով:

- Մասնակցել են ՈԱԲ-ի կողմից կազմակերպած Գիտելիքների ստուգման և գնահատման կարգի, Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցի քննարկմանը և ներկայացմանը:
- Ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության աշխատանքների իրականացում աշխատանքային խմբի հետ միասին, մասնավորապես՝ <<Մասնագիտական կրթական ծրագրեր>>, <<Ուսանողները>> չափանիշի վելուծության վերաբերյալ:

## 9. ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

- Գրադարանի գրքային ֆոնդը կազմում է 5137 օրինակ /ներառյալ օժանդակ գրականությունը՝ 890 միավոր/: Այս ուսումնական տարում ստացել ենք 361 օրինակ գիրք /ներառյալ օժանդակ գրականությունը՝ 62 միավոր/:
- Նոր գրքերը կոմպլեկտավորվել են, կատարվել է գրքերի գրանցում համապատասխան գրքամատյաններում: Գրանցված գրքերի վրա գրվել են բաժիններն ըստ մասնագիտության: Գրվում են ֆորմուլյարներ, գրքերի քարտեր, որոնք տեղադրվում են քարտարաններում՝ ըստ բաժինների: Նոր գրականությունը գրանցելուց և մշակելուց հետո տեղադրվել է գրապահոցի համապատասխան բաժիններում:
- Գրադարանի ընթերցողների /այդ թվում՝ էլեկտրոնային/ հաճախումները կազմում է շուրջ 700, գրքատայցը՝ ավելի քան 120: Բացված են 75 անձնական գրադարանային քարտեր:
- Գրադարանի ամբողջ գրքային ֆոնդի մուտքագրման աշխատանքները համակարգիչ դեռևս ընթացքի մեջ են: Համակարգիչ են մուտքագրվում և պարբերաբար թարմացվում նաև դասախոսների կողմից տրամադրված էլեկտրոնային դասախոսությունները: Կատարվում է նաև էլեկտրոնային գրադարանի համալրում: Այժմ էլեկտրոնային գրքերի քանակը 920 է: Գրադարանում կատարվել է նաև հին գրքերի դուրս գրում, ակտավորում, հնամաշ գրականության վերանորոգում: Թարմացվել են նաև ընթերցողական անձնական քարտերը:

- Գրադարանը համագործակցում է «Հանրապետական գիտաբժշկական գրադարան» ՊՈԱԿ-ի հետ, որին տարին մեկ անգամ ներկայացվում է գրադարանային տարեկան հաշվետվություն:
- Գրադարանը լիովին կատարում է իր առաքելությունը, այն է՝ նպաստել ուսումնական գործընթացին՝ ապահովելով տեղեկատվության մատչելիություն և ժամանակակից ծառայություններ, ինչպես նաև համալրել և ընթերցողներին տրամադրել բժշկության ոլորտի թե՛ տպագիր, և թե՛ էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանները:

## 10. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական մասը, համաձայն իր 2017-2018 ուստարավա աշխատանքային պլանի, աշխատակիցների հետ քննարկել է աշխատանքային գործունեության հիմնական խնդիրները և դրանց լուծման եղանակները:

Ներհամալսարանական տնտեսությունը կազմակերպելիս օգտագործվել է տնտեսական մասի աշխատակիցների ներուժը: Հստակեցվել են տնտեսական աշխատակազմի գործառույթները, կարևորվել է տնտեսական մասի աշխատողների կողմից իրականացվող աշխատանքների կատարման որակը, դրանց նկատմամբ իրականացվել են պարբերական ստուգումներ, զնահատումներ, բացահայտվել են թերությունները և միջոցներ ձեռնարկվել դրանց վերացման ուղղությամբ:

Կատարվել են համակարգիչների, վիրաբուժական գործիքների, գրենական պիտույքների և տնտեսական ապրանքների գնումներ:

- 2017-2018թթ. ուստարվա ուսումնական գործընթացի կազմակերպման համար հատկացված ֆինանսական ռեսուրսներով ձեռք են բերվել
  - գրենական պիտույքներ – 479 000 դրամ
  - բազմաֆունկցիոնալ պատճենահանող սարք – 240 000 դրամ
  - մանրադիտակ -150 000 դրամ
- Լսարանները տեխնիկապես հագեցնելու և կահավորելու համար ձեռք է բերվել
  - համակարգիչներ - 3 424 000 դրամ
  - հեռուստացույցներ – 1 422 000 դրամ
  - շերտավարագույր – 278 000 դրամ

- ուսանողական սեղաններ – 730 500 դրամ
- գրասենյակային աթոռներ – 425 000 դրամ

- Գործող համակարգչային ցանցը բարելավելու նպատակով ծախսվել է 101 500դրամ՝ համակարգչային պարագաների ձեռք բերման համար:
- Ստոմատոլոգիական ուսումնական կաբինետը տեխնիկապես հագեցնելու համար ձեռք են բերվել ստոմատոլոգիական նյութեր և գործիքներ -1 898 450 դրամ
- Համալսարանի կայքի նորացման համար տրամադրվել է 200 000 դրամ
- Համալսարանի հայտարարությունների վահանակները համալրելու նպատակով հատկացվել է 111 000 դրամ:

Լսարանների մասնագիտական կաբինետների, գրադարանի և աշխատասենյակների բոլոր համակարգիչները միացված են համացանցին:

Ուսումնական գործընթացի ապահովման նպատակով տպագրվել են փոքր և մեծ մատյաններ, ուսանողական տոմսեր և ստուգման գրքույկներ:

Անվտանգության նկատառումներով պլանավորվում է տեղադրել անվտանգության տեսախցիկներ: